ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2025

ՀՖՖ Արտոնագրման բաժին

Օգոստոս 2025 թ.

Հարգելի բարեկամ,

ՀՖՖ Արտոնագրման բաժինը Ձեզ է ներկայացնում ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծության տասներեքորդ հրատարակությունը 2025/2026 թվականների մրցաշրջանի և 2024 թվականի ֆինանսական տարվա վերաբերյալ: Այն ներկայացնում է հայկական պրոֆեսիոնալ ակումբային ֆուտբոլը՝ ներառելով Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների վերաբերյալ համեմատական վերլուծություն: Այս փաստաթուղթը հրատարակվում է տասներեքերորդ տարին անընդմեջ և շարունակում է հանդիսանալ ամենամյա սկզբունքով թողարկվող միակ փաստաթուղթը, որը պարունակում է հայկական ակումբների և հայկական ֆուտբոլի վերաբերյալ ֆինանսական, ենթակառուցվածքային, կադրային, իրավական և այլ կարևոր տեղեկատվություն:

Զեկույցն իր մեջ ներառում է 2025/2026 թվականների մրցաշրջանի և 2024 թվականի ֆինանսական տարվա ընթացքում հավաքագրված ողջ տեղեկատվությունը, որն ակումբները ներկայացրել են ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացի շրջանակներում:

Ակումբների արտոնագրման համեմատական զեկույցը իրականություն է դարձել մեր ակումբների կողմից ցուցաբերած աջակցության և պատրաստակամության շնորհիվ, որոնք պատշաճ կերպով տրամադրել են զեկույցի մեջ ներառված համապատասխան տեղեկատվությունը: Օգտվելով առիթից՝ մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Հայաստանի Պրեմիեր Լիգայի բոլոր ակումբներին իրենց աջակցության և սույն զեկույցի կազմմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Զեկույցում ներկայացված են նաև ՀՖՖ կողմից մշակված նոր երկարաժամկետ ռազմավարական ծրագրի շրջանակներում արդեն իսկ գրանցած ձեռքբերումները, մասնավորապես՝ նոր ենթակառուցվածքների կառուցումը, նոր համագործակցությունները և այլն:

Վստահ ենք, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման «Համեմատական վերլուծություն» զեկույցն անկասկած կնպաստի հայկական ֆուտբոլում թափանցիկության մակարդակի բարձրացմանն, ինչն էլ, իր հերթին, հանդիսանում է ՀՖՖ քաղաքականության անկյունաքարերից մեկը:

Արթուր Ազարյան
ՀՖՖ Գլխավոր քարտուղար
ՀՖՖ Ակումբների արտոնագրման և վերահսկողության նախագծի ղեկավար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. *ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ*
ԳԼՈՒԽ 2. *ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ*
ԳԼՈՒԽ 3. *ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ*
ԳԼՈՒԽ 4. *ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ*
ԳԼՈՒԽ 5. *ՄԵԴԻԱ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳ*
ԳԼՈՒԽ 6. *ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ*
ԳԼՈՒԽ 7. *ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ*
ԳԼՈՒԽ 8. *ՄԱՐԶՉԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ*
ԳԼՈՒԽ 9. *ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՖՈՒՏԲՈԼ*

ԳԼՈՒԽ 1.
ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Արտոնագրման գործընթաց

ՀՖՖ Ակումբների արտոնագրման համեմատական վերլուծությունը շարունակում է մնալ իր տեսակի մեջ հայկական ֆուտբոլին վերաբերող միակ ուսումնասիրությունը՝ մի կողմից հանդիսանալով ակումբային ֆուտբոլի ուղեցույցը, մյուս կողմից՝ կատարելով ժամանակակից ֆուտբոլի կարևոր միտումների արձանագրման և փաստաթղթավորման գործընթացը: Վերլուծությունը, հիմնվելով փաստերի վրա, ներկայացնում է անցնող մրցաշրջանում արձանագրված, և՛ դրական, և՛ բացասական միտում ունեցող իրադարձությունները: ՀՖՖ Արտոնագրման բաժինը սույն վերլուծությունը կազմել է ՀՖՖ ակումբների կողմից ներկայացված արտոնագրման 6 չափանիշների (մարզական, կադրային և վարչական, իրավական, ենթակառուցվածքային, ՍԲԿ և ֆինանսական) հիման վրա՝ պահպանելով անկախության և գաղտնիության պատշաճ մակարդակը:

Վերլուծության հիմնական առանցքն են կազմում նախորդ 18 մրցաշրջանների ընթացքում ՀՖՖ Ակումբների արտոնագրման գործընթացի մասին տեղեկատվությունը, կայացված որոշումների համեմատությունները՝ ըստ Ազգային, Առաջին խմբի, ՈւԵՖԱ–ի և ՈՒԵՖԱ-ի Կանանց Չեմպիոնների լիգայի արտոնագրման գործընթացների, մարզասերների՝ ներքին առաջնություններին խաղերի հաճախելիությունը, Հայաստանի Պրեմիեր Լիգայի հանդիպումներին մասնակցած ֆուտբոլիստների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև ակումբների ֆինանսական հաշվետվությունների վրա հիմված տեղեկությունները եկամուտների ու ծախսերի վերաբերյալ:

2025/2026 մրցաշրջանի Ազգային արտոնագիր ստանալու համար դիմել է 11 ակումբ: Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 մրցաշրջանին մասնակցելու իրավունք ընձեռող արտոնագիր ստացել են բոլոր 11 ակումբները:

ՀՀ ֆուտբոլի Առաջին խմբի 2025/2026թթ. առաջնության արտոնագիր ստանալու համար դիմել էին 8 ակումբներ: Առաջին խմբի 2025/2026թթ. առաջնությունում հանդես գալու իրավունք տվող արտոնագիր է ստացել 8 ակումբ՝ «Լեռնային Արցախ» ՖԱ, «Միկա» ՍԱ, «Արարատ Արաքս» ՖԱ, «Անդրանիկ» ՖԱ, «Բենտոնիտ» ՖԱ, «Օլիմպիա» ՖԱ, «Սարդարապատ» ՖԱ և «Սյունիք» ՖԱ:

2025/2026 մրցաշրջանի ՈԵՖԱ–ի արտոնագիր ստանալու համար դիմել է 8 ակումբ: Բոլոր 8 ակումբները՝ «Նոա» ՖԱ-ն, «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն, «Ալաշկերտ» ՖԱ-ն, «Շիրակ» ՖԱ-ն, «Նոա» ՖԱ-ն, «Փյունիկ» ՖԱ-ն և «Ուրարտու» ՖԱ-ն բավարարել են ՈւԵՖԱ–ի արտոնագիր ստանալու համար սահմանված չափանիշները և ստացել են 2023/2024 մրցաշրջանում եվրագավաթներում հանդես գալու իրավունք ընձեռող արտոնագիր:

2025/2026 մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի Կանանց Չեմպիոնների Լիգայի արտոնագիր է ստացել մեկ ակումբ՝ Փյունիկ ՖԱ:

8 Առաջին խմբի առաջնության արտոնագիր	**11** Ազգային արտոնագիր	**8** ՈՒԵՖԱ-ի արտոնագիր

2004-2025/2026 թթ.
ՀՖՖ Ակումբների ստացած, մերժված և հետ կանչված Ազգային արտոնագրեր



2009-2024/2025 թթ.
ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի արտոնագրեր



2024/2025-2025/2026թթ.
ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված
Առաջին խմբի արտոնագրեր



2024/2025-2023/2024 թթ. ՀՖՖ Ակումբների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի Կանանց Չեմպիոնների Լիգայի արտոնագրեր



ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հաճախելիություն

Անցկացնելով համեմատականներ Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2024/2025 մրցաշրջանի և նախորդ մրցաշրջանների հաճախելիության ցուցանիշների միջև՝ ակնհայտ է դառնում, որ երկրպագուների ընդհանուր թիվը նվազել է: Երկրպագուների ընդհանուր թվի նվազումը մեծամասամբ կապված է արտակարգ և ռազմական դրություններով պայմանավորված VBET ՀՊԼ-ի աշնանային հատվածի հանդիպումները առանց հանդիսականների կամ սահմանափակ քանակի հանդիսականներով անցկացնելու որոշումների հետ: Եթե հիմք ընդունենք 2024/2025 մրցաշրջանի 1 խաղի միջին հաճախելիության ցուցանիշը՝ 518 հանդիսական(հաշվի չառնելով առանց հանդիսականների կամ սահմանափակ քանակի հանդիսականներով անցկացված հանդիպումները), ապա կտեսնենք, որ 2019/2020 մրցաշրջանի (1 խաղին՝ միջինը 387 հանդիսական) համեմատ այս ցուցանիշը աճել է: Նախորդ մրցաշրջանի համեմատ VBET ՀՊԼ-ի հանդիպումների միջին հաճախելիությունը ավելացել է 131 հանդիսականովով կամ 33.85 %-ով: Այս ցուցանիշը լավագույն է վերջին 4 մրցաշրջանների համար:

Սեփական հարկի տակ հանդիպումների ժամանակ երկրպագուների ամենամեծ բանակը ունեցել է Երևանի «Ուրարտու» ֆուտբոլային ակումբը, որի տնային հանդիպումները 2024/2025 մրցաշրջանում մարզադաշտից դիտել է 9100 հանդիսական (միջինը 1 խաղում՝ 1138 հանդիսական): Հաճախելիության համեմատաբար բարձր ցուցանիշ է գրանցել նաև «Փյունիկ» ՖԱ-ն: Երևանյան թիմի տնային հանդիպումներին ներկա է եղել ընդհանուր 4200 հանդիսական կամ միջինը՝ 840 հանդիսական:

Տնային հանդիպումերին ամենից քիչ հաճախելիություն է ունեցել «Շիրակ» ֆուտբոլային ակումբը՝ 810 հանդիսական (միջինը՝ 135 հանդիսական): Հատկանշական է, որ «Շիրակ» ֆուտբոլային ակումբը նախորդ մրցաշրջանում հաճախելիության ցուցանիշով առաջատարն էր: «Շիրակ» ֆուտբոլային ակումբի հաճախելիության ցուցանիշների կտրուկ նվազումը մեծապես կախված է ակումբի մրցելույթների վատթարացմամբ: «Շիրակ» ֆուտբոլային ակումբից հետո հաճախելիության վատագույն ցուցանիշն ունի «Ալաշկերտ» ՖԱ-ն՝ 1170 հանդիսական (միջինը՝ 234 հանդիսական):

Բարձրացել է նաև VBET Հայաստանի Գավաթի 2024/25 թթ. խաղարկության միջին հաճախելիության ցուցանիշը: Վերջինս 2019/20 թթ. կազմում էր 304 հանդիսական, սակայն այս մրցաշրջանում այդ ցուցանիշը կազմել է 551 հանդիսական: VBET Հայաստանի Գավաթի 2024/25 թթ. խաղարկության հաճախելիության ցուցանիշի աճի «մեղավորը» եզրափակիչ հանդիպումն է: VBET Հայաստանի Գավաթի 2024/25 թթ. խաղարկության եզրափակիչ հանդիպմանը ներկա է եղել 4000 հանդիսական, որը կազմել է VBET Հայաստանի Գավաթի խաղարկության ընդհանուր հանդիսականների թվի 56%-ը: VBET Հայաստանի Գավաթի 2024/25 թթ. խաղարկության հանդիպումներին ներկա է եղել ընդհանուր 7170 հանդիսական:

VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2017/2018թթ. - 2025/2026թթ. մրցաշրջանների ակումբների հաճախելիության ցուցանիշներ



2025/2026 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբներիտնային հանդիպումների հաճախելիության միջին ցուցանիշներ



ԳԼՈՒԽ 3. ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ ԵՎ ԼԵԳԻՈՆԵՐՆԵՐ

Ֆուտբոլիստներ և լեգիոներներ

Ակումբ	Միջին տարիք
ԲԿՄԱ	20,78
Ուրարտու	23,41
Վան	24,59
Նորավանք	24,63
Նոա	24,71
Արարատ-Արմենիա	25,74
Արարատ	26,21
Փյունիկ	27,79
Ալաշկերտ	29,10
Առաջնության միջին ցուցանիշ	**25,22**

Հաշվետվության այս հատվածում ներկայացված է VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ֆուտբոլիստների տարիքային համեմատական վերլուծությունը:

VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 մրցաշրջանին մասնակցել է (հայտավորված է եղել առնվազն առաջնության 1 խաղի) ընդհանուր 351 ֆուտբոլիստ: Առաջնությանը մասնակցած 351 ֆուտբոլիստներից 165-ը եղել են լեգեոներներ (ներառյալ ԵԱՏՄ երկրներից ֆուտբոլիստները): VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 մրցաշրջանում հանդես է եկել 177 լեգեոներ ֆուտբոլիստ: Լեգեոներ ֆուտբոլիստների տեսակարար կշիռը VBET ՀՊԼ-ում հանդես եկած բոլոր ֆուտբոլիստների մեջ 2025/2026 մրցաշրջանում կազմել է 47%: Հայտավորած արտասահմանցի ֆուտբոլիստների քանակով առաջատարը «Նոա» ֆուտբոլային ակումբն է՝ 31 լեգեոներ: «Նոա» ՖԱ-ին հաջորդում է «Ալաշկերտ» ՖԱ-ն, որի կազմում 2025/2026 մրցաշրջանում հայտավորված է եղել 26 լեգեոներ: Ամենաքիչ քանակով լեգեոներներներներ հանդես են եկել «Ուրարտու» ՖԱ-ում՝ 11, իսկ «ԲԿՄԱ»-ում լեգեոներ ֆուտբոլիստ ընդհանրապես հանդես չի եկել:

VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 մրցաշրջանին մասնակցած ֆուտբոլիստների միջին տարիքը 25,22 է: Նախորդ առաջնությունում ֆուտբոլիստների միջին տարիքը գրեթե նույն էր՝ 25,27 տարեկան:

VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 առաջնությանը մասնակցած թիմերից ամենաերիտասարդ կազմը ունեցել է «ԲԿՄԱ»-ն: «ԲԿՄԱ»-ի ֆուտբոլիստների միջին տարիքը եղել է 20,78 տարեկան: Այս փաստը պայմանավորված է նրանով, որ «ԲԿՄԱ»-ում հանդես են գալիս հիմնականում 18-20 տարեկան զինծառայող ֆուտբոլիստները:

2-րդ «ամենաերիտասարդ» թիմը «Ուրարտու» ՖԱ-ն է՝ 23,41 տարեկան:

VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 մրցաշրջանի «ամենատարեց» թիմն «Ալաշկերտ» ՖԱ-ն է (ֆուտբոլիստների միջին տարիքը՝ 29,10): «Ալաշկերտ» ՖԱ-ի կազմում գերակշիռ մաս են կազմել 30 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող ֆուտբոլիստները՝ 32 ֆուտբոլիստ:

«ԲԿՄԱ», «Ուրարտու», «Նոա» և «Վան» ֆուտբոլային ակումբները մեծամասամբ ապավինել են մինչև 25 տարեկան ֆուտբոլիստների:

VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2025/2026 առաջնությունում հանդես եկած բոլոր ֆուտբոլիստների միջին տարիքը 25,22 է:

2021/2022 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների ֆուտբոլիստների տարիքային ցուցանիշներ



2025/2026 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբներում հանդես եկած լեգիոներ ֆուտբոլիստներ



2025/2026 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայում մ21 տարեկան* ֆուտբոլիստների ստացած խաղաժամանակը:



*2001 թ.-ին կամ ավելի ուշ ծնվածներ

2025/2026 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայում և VBET Հայաստանի գավաթի խաղարկությունում մ21 տարեկան* հայաստանցի ֆուտբոլիստների ստացած խաղաժամանակ:



*2001 թ.-ին կամ ավելի ուշ ծնվածներ

ԳԼՈՒԽ 4. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Եկամուտներ և ծախսեր

Համաձայն ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի՝ VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են տարեկան պարտադիր աուդիտի, որի արդյունքները ներկայացվում են ՀՖՖ Արտոնագրման բաժին: Այս տարին էլ բացառություն չէր այդ տեսանկյունից:

Ֆինանսական չափանիշի պատշաճ իրագործումը պարտադիր պահանջ է՝ ՈՒԵՖԱ-ի մրցաշարերին մասնակցելու արտոնագիր ստանալու համար: 2023 թվականին VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 9 ակումբներից 7-ը դիմել են ՈԵՖԱ-ի արտոնագիր ստանալու համար: 7 ակումբից 6-ը բավարարել են վերոնշյալ չափանիշը՝ հնարավորություն ստանալով մասնակցելու 2025/2026 մրցաշրջանի ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին:

Ֆինանսական չափանիշի պահանջներին բավարարելու համար ակումբները պետք է ներկայացնեն ֆինանսական վիճակի, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական հոսքերի, ինչպես նաև սեփական աշխատակիցների, հարկային և սոցապ մարմինների և այլ ակումբների նկատմամբ ժամկետանց վճարումների բացակայության վերաբերյալ հաշվետվություններ:

Ստացված տեղեկատվության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականի համեմատությամբ 2022 ֆինանսական տարում ՀՀ ակումբների ընդհանուր եկամուտները աճել են շուրջ 38%-ով: 2022 թվականին ՀՀ ակումբների ընդհանուր ծախսերը նույնպես աճել են 29,24%-ով:

Հարկ է նշել, որ ակումբների հիմական եկամտի աղբյուրները շարունակում են մնալ ՈՒԵՖԱ-ից ստացված պարգևավճարները, համերաշխության գումարները և ակումբների սեփականատերերի/հիմնադիրների անձնական ներդրումները:

2025/2026 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների ակումբների 2022թ. ֆինանսական տարվա ծախսերը (հազար ՀՀ դրամ)



2025/2026 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների ակումբների 2022թ. ֆինանսական տարվա եկամուտները (հազար ՀՀ դրամ)



2023/2024 VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի ակումբների ակումբների 2022թ. ֆինանսական տարվա հաշվապահական հաշվեկշիռը (հազար ՀՀ դրամ)



ԳԼՈՒԽ 5. ՄԵԴԻԱ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳ

PICTORIAL CERAMICS

Մեդիա

Վերջին տարիներին հայկական ակումբների ավելի մեծ կարևորություն են տալիս սոցիալական և լրատվական հարթակներում ակտիվությանը: Այս մոտեցումը հանգեցրել է նրան, որ վերջին տարիների էապես ավելացել է նաև ակումբների լսարանը սոցիալական հարթակներում:

VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի բոլոր ակումբները հետևորդների ամենամեծ բանակն ունեն Facebook-ում: Facebook-ում ամենից շատ հետևորդ ունի «Արարատ» ՖԱ-ն՝ մոտ 21,000 հետևորդ: «Արարատ» ՖԱ-ին հաջորդում է «Ուրարտու» ՖԱ-ն, որն ունի մոտ 20,000 հետևորդ: Facebook-ում հետևորդների քանակով 3-րդ հորիզոնականում է «Փյունիկ» ՖԱ-ն՝ 19100 հետևորդ: Ամենից քիչ հետևորդներ Facebook-ում ունի «ԲԿՄԱ» ՖԱ-ն՝ 2,700 հետևորդ:

Եթե հաշվենք բոլոր սոցիալական հարթակներում ակումբների հետևորդների ընդհանուր քանակը, ապա այս դեպքում առաջատարը կլինի «Փյունիկ» ՖԱ-ն է՝ 40,662 հետևորդ: «Փյունիկ» ՖԱ-ի՝ նման ցուցանիշով առաջին հորիզոնականում գտնվելը պայմանավորված է նրանով, որ ակումբը ակտիվություն է ցուցաբերում գրեթե բոլոր հարթակներում: Բոլոր սոցիալական հարթակներում հետևորդների հանրագումարով հաջորդ ակումբը «Ուրարտու» ՖԱ-ն է՝ 27,946 հետևորդ, իսկ 3-րդ տեղում՝ «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն՝ 33,877 հետևորդ:

«Արարատ», «Արարատ-Արմենիա», «Նոա», «Ուրարտու» և «Փյունիկ» ֆուտբոլային ակումբներն ունեն պաշտոնական էջեր ամենատարածված սոցիալական հարթակներում (Facebook.com, Instagram, Youtube, Twitter, TikTok):

Մարզահագուստի ապրանքանիշեր և տիտղոսային հովանավորներ

Vbet Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2021/2022 մրցաշրջանի մասնակից ակումբների նախընտրել են տարբեր ապրանքանիշերի համազգեստներ: 2021/2022 մրցաշրջանի ընթացքում միևնույն ապրանքանիշի մարզահագուստ օգտագործել են «Արարատ» ՖԱ-ն և «Նորավանք» ՖԱ-ն՝ «Fourteen» ապրանքանիշի, ինչպես նաև «Արարատ-Արմենիա» ՖԱ-ն և «Վան» ՖԱ-ն՝ «Puma» ապրանքանիշի: Մյուս բոլոր ակումբների խաղային հանդերձանքների ապրանքանիշերը չեն համընկնում:

Վերջին տարիներին հայկական ակումբները ավելի մեծ ուշադրություն են սկսել դարձնել իրենց մարքեթինգային քաղաքականությանը, ինչի արդյունքում տարեց տարի ավելի շատ ակումբներ են ձեռքբերում տիտղոսային հովանավորներ: Vbet Հայաստնի Պրեմիեր Լիգայի 2021/2022 մրցաշրջանի 9 ակումբներից 6-ը ունեին տիտղոսային հովանավորներ: Հատկանշական է, որ տիտղոսային հովանավոր ունեցող 6 ակումբներից 4-ի հովանավորը բուքմեյկերական ընկերություններ էին:

Ակումբ	Խաղային հանդերձանքի ապրանքանիշ
Ալաշկերտ ՖԱ	Saller
Արարատ ՖԱ	Fourteen
Արարատ-Արմենիա ՖԱ	Puma
ԲԿՄԱ	Macron
Նոա ՖԱ	Adidas
Նորավանք ՖԱ	Fourteen
Վան ՖԱ	Puma
Ուրարտու ՖԱ	Jako
Փյունիկ ՖԱ	Joma

ԳԼՈՒԽ 6. ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՆՈՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

ՆՈՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Աբովյանի քաղաքային մարզադաշտ

ՀՖՖ հիմնադրման 30-ամյակին նվիրված միջոցառումների շարքում Աբովյան քաղաքում հանդիսավոր կերպով վերաբացվեց «Քաղաքային» մարզադաշտը: Միջոցառմանը մասնակցեցին ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանը և ՈՒԵՖԱ-ի նախագահ Ալեքսանդր Չեֆերինը: Հիմնովին վերանորոգված մարզադաշտն այսուհետ կարող է տեղավորել 3100 հանդիսական: Մարզադաշտում տեղադրվել է նոր խոտածածկ, վերանորոգվել են մարզադաշտի տրիբունաները և հանդերձարանային հատվածները, մարզադաշտի արևմտյան տրիբունայում տեղադրվել է ծածկ, բարեկարգվել են մարզադաշտի հարակից տարածքները. կառուցվել է մարզումային փոքր խաղադաշտ, ինչպես նաև տեղադրվել է լուսավորության բարձրակարգ համակարգ:

Շահագործման հանձնվելուց հետո մարզադաշտը կհամապատասխանի ՈՒԵՖԱ-ի երկրորդ կատեգորիային: Դա նշանակում է, որ այստեղ հնարավոր կլինի անցկացնել ինչպես Vbet Հայաստանի Պրեմիեր Լիգայի, այնպես էլ միջազգային հանդիպումներ, մասնավորապես, ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների և Եվրոպա լիգայի որակավորման 1-ին և 2-րդ փուլի, Հայաստանի երիտասարդական ու պատանեկան հավաքականների մասնակցությամբ հանդիպումներ:

Արմավիրի մարզադաշտ

Արմավիրի մարզադաշտը հիմնադրվել է դեռևս 1980 թվականին: Սկզբում կրել է Հոբելյանական անվանումը և համարվել է Հայաստանի խոշոր մարզադաշտերից մեկը: 1985 թվականին, երբ ԽՍՀՄ-ը իրավունք է ստացել հյուրընկալելու Աշխարհի երիտասարդական առաջնությունը, այստեղ անցկացվել է խմբային փուլի հանդիպումների մեկը:

Մարզադաշտի վերակառուցման շինարարական աշխատանքները սկսվել են 2018 թվականին և տեխնիկական պառճառներով ընդհատվել 2019-ին:

2021 թվականին ՀՖՖ-ն կրկին վերսկսել է մարզադաշտի շինարարությունը, և ընդամենը 7 ամիս անց մարզական հրաշալի կառույցն ավարտուն տեսք է ստացել:

Մարզադաշտում տեղադրվել է 3 բնական և 1 արհեսական խոտածածկ, վերանորոգվել է մարզադաշտի տրիբունան և հանդերձարանային հատվածները, մարզադաշտի տրիբունայում տեղադրվել է ծածկ, բարեկարգվել են մարզադաշտի հարակից տարածքները:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Սիրողական ֆուտբոլի Ա Լիգա

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախաձեռնությամբ առաջին անգամ Հայաստանում կանցկացվեց սիրողական ֆուտբոլի առաջնություն, որին մասնակցեցին 11 թիմեր:

Սիրողական առաջնության նպատակն է ՀՀ տարածքում սիրողական ֆուտբոլի զարգացմանը նպաստելը, սիրողական ֆուտբոլիստների վարպետության մակարդակի բարձրացմանը նպաստելը, ազգաբնակչության մոտ առողջ ապրելակերպը և ֆիզիկական զարգացումը խթանելը: Առաջնությունը նպատակ ունի նաև ավելացնել սիրողական ֆուտբոլով զբաղվող մարդկանց քանակը, ինչպես նաև հնարավորություն ընձեռել պրոֆեսիոնալ թիմերում չընդգրված ֆուտբոլիստների հանդես գալ սիրողական մրցաշարում և պահպանել մարզավիճակը:

Սիրողական ֆուտբոլի Ա լիգայի առաջնությունը կմեկնարկել 2022 թվականի հոկտեմբերին և տևել է շուրջ 9 ամիս: Մրցաշարի բոլոր հանդիպումները կայացել են ՀՖՖ Տեխնիկական կենտրոն/ադադեմիայում:

ՀՖՖ-ն ՈՒԵՖԱ-ի Ֆուտբոլը և փախստականները դրամաշնորհային մրցույթի հաղթող:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան 2021 թվականին հաղթել է UEFA Football and Refugee Grant Scheme 2024/25 (ՈՒԵՖԱ-ի ֆուտբոլի և փասխտականների դրամաշնորհ) դրամաշնորհային մրցույթում:

ՈՒԵՖԱ-ն և իր գործընկեր ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակն (UNHCR) արժևորում են ֆուտբոլի միավորող դերը փախստականների ինտեգրման գործում: Այս կապակցությամբ ամեն տարի ՈՒԵՖԱ-ն ներկայացնում է դրամաշնորհային ծրագրեր, որոնք նպաստում են անդամ ասոցիացիաներում ֆուտբոլի միջոցով փախստականների օժանդակմանը:

Այս տարվա մրցույթին մասնակցելու համար, ընդհանուր առմամբ, դիմել էին 17 ասոցիացիաներ, որոնցից հաղթող են ճանաչվել վեցը՝ Հայաստան, Բուլղարիա, Ուելս, Խորվաթիա, Ֆինլանդիա և Հյուսիսային Իռլանդիա: ՈՒԵՖԱ-ն հաղթող ասոցիացիաներին շնորհում է 50,000 ական եվրո դրամաշնորհ, որը պետք է ծախսվի փախստականների ինտեգրման՝ նախապես ներկայացված ծրագրի համար:

ՀՖՖ-ն, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակն (UNHCR Armenia) հետ համատեղ ծրագրի շրջանակներում իրականացրել է Play together for integration (Խաղանք հանուն ինտեգրման) ծրագիրը, որի նպատակն է ֆուտբոլի միջոցով նպաստել Հայաստանում բնակություն հաստատած փախստական և տեղահանված ընտանիքների ինտեգրմանն իրենց նոր բնակավայրերում:

Team Telecom Armenia-ն՝ Հայաստանի ազգային հավաքականի պաշտոնական գործընկեր

Team Telecom Armenia ընկերությունը դառձել է Հայաստանի ազգային հավաքականի պաշտոնական գործընկերն է: ՀՖՖ-ի և Team Telecom Armenia-ի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:

Համագործակցության շրջանակներում Team Telecom Armenia–ն հանդես է եկել որպես Հայաստանի ազգային հավաքականի գործընկերը և իր աջակցությունն է ցուցաբերելո ֆեդերացիային խաղադաշտերի կոմունիկացիոն ենթակառուցվածքները արդիականացնելու և VAR համակարգը ներդնելու հարցում:

Team Telecom Armenia ընկերության և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի համագործակցության շրջանակներում նախատեսվում է նաև այլ ծրագրերի իրականացում, որոնք կնպաստեն ֆուտբոլի զարգացմանը Հայաստանում:

Ճանաչողական սեմինար-հանդիպում ՀՖՖ ակումբների ներկայացուցիչների հետ արտոնագրման 2023/2024թթ. մրցաշրջանի վերաբերյալ (20.01.2023թ.)

Հունվարի 20-ին՝ ՀՖՖ գրասենյակում, տեղի է ունեցել ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից կազմակերպված սեմինար-հանդիպում՝ «Ազգային», «ՈՒԵՖԱ»-ի և «ՈՒԵՖԱ»-ի Կանանց Չեմպիոնների լիգայի արտոնագրերի թեկնածու ակումբների արտոնագրման և ֆինանսական պատասխանատուների մասնակցությամբ:

Սեմինար-հանդիպման ընթացքում ակումբների ներկայացուցիչները ծանոթացել են բոլոր այն փոփոխություններին, որոնք տեղի են ունեցել նախորդ մրցաշրջանի համեմատ՝ կապված արտոնագրման չափանիշների հետ: Հանդիպման ժամանակ ակումբների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել ծանոթանալու այն պահանջներին, որոնք պետք է բավարարեն՝ մինչև մարտի 3-ը ներկայացնելով համապատասխան ոչ ֆինանսական փաստաթղթային փաթեթները:

Ճանաչողական սեմինար-հանդիպում ՀՀ Առաջին խմբի ակումբների արտոնագրման 2023/2024թթ. մրցաշրջանի վերաբերյալ (28.04.2023թ.)

2023 թվականի ապրիլի 28-ին՝ ՀՖՖ գրասենյակում, կայացել է ճանաչողական սեմինար-հանդիպում բոլոր այն ակումբների հետ, որոնք ցանկություն էին հայտնել մասնակցելու ՀՀ Առաջին խմբի 2023/2024թթ. մրցաշրջանի առաջնությանը: Արդեն 4-րդ մրցաշրջանն է ինչ ներդրվել է Առաջին խմբի առաջնության ակումբների արտոնագրման գործընթացը, որին մասնակցելը և համապատասխան արտոնագիր ստանալն ակումբների համար պարտադիր պահանջ է ՀՀ Առաջին խմբի առաջնության մասնակցության համար:

Հանդիպման ընթացքում մասնակիցներին ներկայացվել է ակումբների արտոնագրման գործընթացը և դրա էությունը: Մասնակիցները մանրամասն ծանոթացել են ՀՀ Առաջին խմբի ակումբների արտոնագրման կանոնակարգին (2023թ. խմբագրություն)՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով Առաջին խմբի առաջնության համար սահմանված պարտադիր պահանջներին ենթակառուցվածքային, իրավական, կադրային և վարչական, ինչպես նաև մարզական չափանիշների շրջանակում:

«ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2025»-ի ստեղծմանը նպաստել են՝

Վահան Բերակչյան	**ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ**
Նաիրա Աբրամյան	**ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետի տեղակալ**
Նունե Սարգսյան	**ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետ**

Լուսանկարներ՝

Հակոբ Բերբերյան

Գևորգ Ղազարյան

.FCNOAH.AM
CLUB
NOAH
BUSINESS CENTER
SPACE
NOAH